Վերցուց թէ՝—Դուք վի՞ր տղեկներն իք։

Ըսեց.—Մենք Սենեքերիմ թագաւորի տղեկներն ինք։

—Օր հմալ է, ըսեց, մենք չ'ընք կրնայ ձրգի պահէ, գացէք։

Էդ տեղէն ետ դարձան, գացին ճամբխու վրէն կայնան ու միտք էրին թէ՝ դո՞ր էրթանք։

Ըսեց.—Էրթանք Մուշ՝ Մուշեղ թագաւորի կուշտ։

Ու գացին, հասան էդ քաղաք։

Գացին, գացին թագաւորի առէչ[1]) կայնան, գլուխ իջուցին եօթ տեղով՝ թամանդայ էղան։

Ըսեց.—Ի՞նչ պակասուտեն ունիք, ո՛րտի։

Ըսեց.—Պակասուտեն չունինք. ըսեց՝ վերի դէն Աստուածն ենք ապաւինի, ներքին դէն քրզի, որ մրզի պահիս ու պահպանիս, քու աչք հովայի մրզի վրայ էղնի. Աստուած իրարուց չ'ամչցուս։

Ըսեց.—Ո՛րտիք, վի՞ր տղեկներն իք։

Թէ՝—Սենեքերիմ թագաւորի տղեկներն ինք։

Ըսեց.—Մենք չընք իշխընայ պահի, էնի զօրնդեղ թագաւոր ա, կիգայ մեր ար ու հեսիր կ'տանայ։ Ետ դարձէք գացէք, չընք կեարնայ պահէ։

Ընկան ճամբախ ու գացին. ջրի 'մ[2]) ռաստ էկան, տեսան, օր մէկ բարակ առուս սարից կիգայ, կ'կտրի էն ահագին գետ, կ'ընցնի ու կ'խառուի հետ, կ'երթայ։

Էդ երկու ախպէր մէկ-մէկու հարցուցին.—Էդա բարակ առուի զօրուտեն ի՞նչ ա, օր կիգայ, կ'կտրի, կ'ընցնի, կ'խառուի հետ, կ'երթայ։

Սանասար վերուց, Ասլիմելիքին ըսեց թէ՝—Որն օր էդոր ական ջուր խմէ, հմալ կտրիճ կ'էղնի։

---

[1]) Ա-ի է փոխուելը սովորական երևոյթներից մէկն է այս բարբառում. օր. յառէջ, էւել (աւելի), էնել, կէր.

[2]) Ա. (Ավինայ) վարիանտի մէջ այդ գետը որոշուած է, Մուրադ գետի մէջ է թափուում բարակ առուն։